ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ժերոմ Նապոլէօն։—Լուդուիգ Վինդհորստ

† ՊՐԻՆՑ ԺԵՐՈՄ ՆԱՊՈԼԷՕՆ

«Recht hat jeder eigene Charakter», «Ինքնուրոյն մարդուն ամեն ինչ ներուած է!»։ Ահա մի խօսք, որ Շիլլերը Վալլենշտայնի բերանն է դնում։ Բայց որ այդ խօսքը միայն սահմանափակ նշանակութիւն ունի, ժամանակակիցներից քչերը կարող են դորան այնքան պարզ օրինակ ծառայել, որքան նոր տոմարով մարտի 17-ին վախճանուած պրինց Ժերոմ Նապոլէօն, Նապոլէօնների երկրորդ սերունդի այդ վերջին ներկայացուցիչը։ Նա ըստ ամենայնի մի «ինքնուրոյն» բնաւորութիւն էր և միևնոյն ժամանակ ոչ սովորական ընդունակութիւնների տէր մարդ, բայց և այնպէս ամենքի առջև նա միայն պարտական մնաց։ Իւր տոհմի անդամների համար նա միայն մի ծանրութիւն էր դառել, որպէս ծանրութիւն էր նա բոնապարտի զմի վերականգման հեղինակներին 50-ական թուականներին։ «Կարմիր պրինցը», որպէս կոչւում էր հանգուցեալը, գրեթէ առանց կարեկցութեան հեռացաւ աշխարհից, որի լոյսը նա տեսաւ 9-ին սեպտեմբերի 1822 թուականի Տրիեստում, որպէս նախկին Վեստֆալեան թագաւորի որդի։

Նա Վեստֆալեան թագաւոր Ժերոմ Բոնապարտի [1]) երկրորդ

---

[1]) Այդ Ժերոմ Բոնապարտը կայսր Նապոլէօն առաջնի եղբայրներից մէկն էր, որ մեծ Նապոլէօնի ձեռքով նշանակուեց թագաւոր նորաստեղծ Վեստֆալեան թագաւորութեան։ Մեծ Նապոլէօնի եղբայրներն էին՝ Ցոզեֆ (Իսպանիայի թագաւոր), Լիւսիեն (Իշխան Կանինօի), Լուի (թագաւոր Հոլլանդիայի, որի որդին Լուի Նապոլէօն 1852—1870 թ. կայսր էր

որդին էր, կրթուեց Լուդովիգսբուրգի զինուորական ուսումնարանում և հասարակաց ասպարէզ եկաւ կէս դար մեզնից առաջ իւր հեռուեալ մի քայլով։ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ պատերազմ լինելու մասին լուրեր տարածուած լինելով (այդ պատերազմը չեղաւ), նա, դեռ ևս բոլորովին երիտասարդ, 1840-ին իւր պապ՝ Վիւրտեմբերգի թագաւորին յետ տուեց լեյտենանտութեան պատենտը «որ ստիպուած չը լինի իւր հայրենիքի դէմ կռուելու»։ Հինգ տարի յետոյ, 23 տարեկան հասակում նա առաջին անգամ ոտք դրեց իւր այդ հայրենիքը, թոյլտուութեամբ [1]) Ֆրանսիացւոց թագաւոր Լուի-Ֆիլիպի։ Բայց Ժերոմ Նապոլէոն իրան այնպէս պահեց որ թագաւորը նորան դուրս արաւ երկրի սահմաններից։ Երկու տարուց յետ նրան կրկին թոյլտուութիւն տուեց Ֆրանսիա գալ, իսկ 1848 թուականի յեղափոխութեան օրերին, երբ Լուի-Ֆիլիպին գահընկեց արին և երկրից աքսորեցին, նա քաղաքային տան առջև իւր ծառայութիւնն էր առաջարկում «ժամանակաւոր կառավարութեան» ասելով՝ «ամեն մի լաւ քաղաքացու պարտաւորութիւն է միանալ հանրապետութեան հետ»։

Ըստ ամենայնի Վեստֆալիայի նախկին թագաւորի որդին լրջօրէն էր ուզում յարել հանրապետութեան, որովհետև նա իւր տեսակ էր ըմբռնում հանրապետութիւնը, բոլորովին ոչ այնպէս, ինչպէս այդ իրականացրեց իւր հօր-եղբօր որդի ապա կայսր Նապոլէոն III. Ժերոմ Նապոլէոն ուզում էր մի դիմոկրատական հանրապետութիւն, որի գլուխ կանգնած կը լինի ժողովրդից ընտրուած մի կեսար։ Այդ այնպիսի մի պետական ձև է, որ գոյութիւն ունէր Հռովմում՝ հանրապետութեան վերջին օրերում և որի նմանը փորձուած էր նոյն իսկ Ֆրանսիայում՝ երբ Նապոլէոն I կայսրը դեռ ևս միայն կոնսուլ էր։ Այդ մտքով, իբր ներկայացուցիչ Կորսիկայի մի մի-

---

Ֆրանսիացւոց Նապոլէոն III անունով)։ Ժերոմ (թագաւոր Վեստֆալիայի), որի որդին էր Նորերումս հանգուցեալ պրինց Ժերոմ Նապոլէոն, կոչուած Պլոն-Պլոն, որ և գլուխն էր Բոնապարտեան տոհմի, 1879 թ. գէս, ապրիլքն այն ժամանակից, երբ վախճանուեց կայսր Նապոլէոն III-ի որդի պրինց Լուի Նապոլէոն, կոչուած Լուլու)։ Մեծ Նապոլէոնի անկումով ընկան նաև իւր եղբայր թագաւորները, որոնց տեղը բռնեցին այն երկիրների նախկին իշխանները։

[1]) Նապոլէոններին արգիլուած էր մուտքը Ֆրանսիա։

ճակի, նա տեղ գրաւեց 1848 թուականի սահմանադրող ժողովում՝ ձախակողմեանների շարքում, որ իւր ձայնը տայ յօգուտ այն բոլոր առաջարկների, որոնց նպատակն էր մի հաստատուն և չափաւոր հանրապետութիւն, ի միջի այլոց յօգուտ երկ-ժողովեայ սիստեմի [1]։

Բայց չը նայած դորան, չը նայած որ նա տեղնակ էր իւր հօրեղբօր որդու դիտաւորութիւններին, նա նպաստեց նորա՝ հանրապետութեան նախագահ ընտրելուն, իսկ 1852 թուականի սկզբներում նա թոյլ տուեց որ իրան նշանակեն Ֆրանսիայի դեսպան Մադրիդում։ Բայց ճանապարհին՝ Բորդոյում նա մի քաղաքական ճառ կարդաց, որի համար հրապարակաբար յանդիմանութիւն ստացաւ հանրապետութեան նախագահից։ Ժերոմը պատասխանեց դորան իւր հրաժարականով և շարունակեց նստել ազգային ժողովի ձախակողմեանների շարքում. բայց և այնպէս նա իրան պահեց այնքան զգոյշ, որ նորից գրաւեց Նապոլէօն երրորդի ողորմածութիւնը, և երբ սա կայսր դառաւ, նշանակեց սենատի և պետական խորհրդի անդամ և ճանաչեց որպէս տոհմական պրինց։

Այն դերը որ նա խաղաց Նապոլէօն III-ի կայսերութեան ժամանակ, բաւականաչափ բնորոշուած է այն ծաղրական մականունով որ տուեցին նրան։ Նորան անուանում էին «կարմիր պրինց»։ Կայսերութեան սկզբնական տարիներում նա նկատուած էր որպէս կայսերական գահաժառանգ. բայց և այնպէս, առանց ուղղակի տոհմական շահերի դէմ գործելու, նա շարունակեց մնալ ընդդիմադիր դեմոկրատական կուսակցութեան շարքերում, ներկայացուցիչ լինելով այդ կուսակցութեան մի առանձին տեսակին՝ կայսերական դիմոկրատական կուսակցութիւն անունով, միշտ շեշտելով, թէ կայսերութիւնը, եթէ ուզում է կայուն մնալ և ժամանակի պահանջներին համապատասխանել, պէտք է յեղափոխական ծագումին հաւատարիմ մնայ։

---

[1]) Սահմանադրական երկիրներում լինում է կամ մի ազգային ժողով և կամ բացի դորանից՝ մի երկրորդ ժողով, որ կոչւում է բարձր ժողով, սենատ կամ այլապէս։ Վերջին դէպքում ամեն մի օրինագիծ դառնում է օրէնք միայն այն ժամանակ, երբ նա ընդունւում է նախ առաջնում, յետոյ երկրորդում և ապա պետութեան գլուխ կանգնած թագաւորից կամ հանրապետութեան նախագահից։ Պատրաստեղ դեմոկրատները միշտ պահանջել են մի-ժողովնայ սիստեմ, չափաւորները՝ երկ ժողովեայ սիստեմ։

եւ չը նայած դորան՝ կայսրը շարունակում էր ցոյց տալ դէպի նա հաւատ և անձնական բարեհաճութիւն. այն աստիճանի, որ կարծիք կազմուեց թէ կայսրը երկու ձեռքով խաղ է խաղում, ուր աջ ձեռքը չը պիտի ձախի խաղը տեսնի և որ դեմոկրատական կայսերութիւնը պահեստի մէջ պէտք է մնայ, որ երեւան գայ երբ ինքնահեծան (autoritaire) կայսերութիւն շարունակելը անհնարին կը դառնայ։ Դա սխալ էր. բայց ընդհանուր կարծիքը պատկերացաւ Օֆֆենբախի օպերային վոդեւիլի մէջ՝ «Որփէոսը դժոխքում» (Orphée aux Enfers, Орфей въ аду), Ոլիմպիական Իւպիտերի յարաբերութեան մէջ դէպի ստորերկրեայ աստուած Պլուտոնը, որը հեւացած (յեղափոխական) շրջանի ոգիները իւր շուրջն է ժողովում։

Իսկութիւնը սա է, որ կայսր Նապոլէօն III այնքան խորամանկ չէր. նորա հակումը դէպի իւր աչքում հեղինակաւոր երեւացած մարդիկ հանում էր թուլութեան, մինչդեռ նորա հօրեղբօր որդին՝ պրինց Ժերոմ Նապոլէօնը որպէս մի կատարելագործուած ցինիկոս, որպէս սկզբունքով ատող ամեն հեղինակութեան, ինչ կարգի էլ վերջինս լինի,—իւր ըմբոստ բնաւորութեան միայն այնքանով էր սանձ դնում, որքան այդ հարկաւոր էր իշխանական դիրքից չը զրկուելու համար։ Ցանուն յեղափոխական գաղափարների, նա կուի ձեռնոց շպրտեց եղած պետական և հոգեւորական կարգերին, բայց միշտ կարողանում էր այնպէս դուրս պրծնել, որ բարձր պաշտօններ էր ստանում, ուր նա իւր յանձնարարողի հաւատը միշտ իչարն էր գործ դնում։

Դոցանից առաջինի, այն է իսպանական դեսպանութեան մասին արդէն յիշատակութիւն արեցինք։ Երկրորդ բարձր պաշտօնն էր այն, որ նրան մի հրամանատարութիւն յանձնեց Ֆրանսիական զօրքերի վերայ Ղրիմի պատերազմում։ Թէ ինչ դեր խաղաց այդ գործում, բաւական է «Պլոն-Պլոն» մականունը որ տուեց նրան այդ առիթով։ Աւելի արժանաւոր կերպով նա կատարեց իւր մի երրորդ պաշտօնը իբր գլխաւոր դեկավար 1856 թուականի աշխարհահանդէսի։ Այդտեղ նա ցոյց տուեց կառավարչական արտակարգ ընդունակութիւններ, փայլուն պերճախօսութիւն, անխոնջ աշխատանքի ոյժ և մանաւանդ լաւ ֆինանսիստ։ Կայսրը նորա այս վաստակների համար նրան յանձնեց մինիստրութիւնը Ալժիրիայի և կոլոնիաների համար և դարձրեց նորան

իւր մտերմական խորհրդատուն, չը նայած որ շուտով տարաձայնութիւններ առաջ եկան նոցա մէջ։ Իտալական արշաւանքի առաջին շրջանում պրինց Ժերոմ Նապոլէօն համաձայնուեց պսակուել Վիկտոր Էմանուէլի աղջկայ հետ և պատերազմի մէջ առիթ տեսաւ իւր թշնամական զաղափարները դէպի Աւստրիայի Հաբսուրգի տունը և դէպի պապը իրագործել։ Դորանով աւելի սաստկացաւ նորա և կայսեր մէջ եղած տարաձայնութիւնը, այնպէս որ կայսրը, սարսափելով իւր իտալական քաղաքականութեան հետևանքներից, 1861 թուականին այդ քաղաքականութեանը այլ ուղղութիւն տուեց։ Իւր հռետորական ամբողջ տաղանդով և իւր տեմպերամենտի ամբողջ կրքոտութեամբ, բայց կորսիկական վայրենութիւնով շաղախուած մի ճառում, 15 մայիսի 1865 թ., պրինցը հրապարակաւ յայտարարեց իրան ընդդէմ պապի երկրաւոր իշխանութեան, յօգուտ ազգայնութեան սկզբունքի անողոք իրագործմանը։ Այդ ճառի պատճառով նա կորցրեց իւր նոր ստացած երկու պաշտօնները՝ որպէս փոխ-նախագահ պետական զաղտնի խորհրդի և որպէս անդամ խնամակալութեան խորհրդի։

Որ այս բոլորի հետ կապուած էին նորանում նաև պետական մարդու հեռատես և ճիշտ հայեացքներ, այդ երևաց 1870-ին, երբ նա պատերազմը Պրուսիայի և Գերմանիայի դէմ յայտարարեց որպէս տխուր ութիւն և զուշակեց գերմանական զօրքերի յաղթութիւնը և կայսերութեան անկումը։ Էրնէստ Ռենան և պրինցի միւս մտերիմները պնդում են, որ պրինց Ժերոմ Նապոլէօնի պատահական բացակայութիւնը Ֆրանսիայից (նա ճանապարհորդում էր Նպիցբերգէն կողում) պատերազմի հաւանական պատճառների թւում պէտք է համարել, որովհետև միայն նա՝ բաւականաչափ հեղինակութիւն ունէր կայսեր վերայ։ Նոյնպէս նա հաստատապէս յայտնեց որ իզուր է սպասել Իտալիայի օգնութիւնը և որ այդ նպատակով Ֆլորենցիա գնալը ապարդիւն պէտք է անցնի։

Կայսերական դատը նա հենց 1871 թուականին թողեց. նոյնպէս և Նապոլէօն III-ի որդու մահից յետ նա ոչ մի հակումն չը ցոյց տուեց այն պաշտպանելու։ Այդ շատ զարմացրեց նորա հին թշնամիներին՝ Ռուհէ, Կասանյակ և այլն, որոնք միշտ փոքր նշանակութիւն էին տուել նրան։ Այդ նորանիցն է, որ նպաստաւոր կարծիք չը կար կազմուած պրինց Ժերոմ Նապոլէօնի մասին։ Նրանց, որոնք նորան

ճանաչում էին, պրինցը թուում էր մարմնացումն ցինիզմի և բարոյական սկզբունքից զուրկ լինելուն, որը նորա տոհմի գրեթէ բոլոր անդամներին յատուկ է։ Զարմանալի էր թուում որ այդքան հաստատուն դեմոկրատ, ինչպէս նա էր, շարունակում էր օգուտել այն բոլորից, ինչ տուել էին նրան իշխանական ծնունդը և դիրքը. զարմանալի էր թուում որ Նապոլէօն III-ին, որը այնքան բարեհաճութիւն էր ցոյց տալիս դէպի նա, միշտ դժուարութիւնների մէջն էր գտնում, որ կարելի էր արդարացնել միմիայն հրաժարելով իւր իշխանական տոհմային իրաւունքներից։ Միւս կողմից նորա կենցաղավարութիւնը, նորա անողոք վարմունքը դէպի իւր ամուսինը և որդիքը, նորա հակումը դէպի այնպիսի մարդիկ և կանայք, որոնք նորա նման անսկզբունք էին (ի միջի այլոց նորա կոմպրոմիսը Բուլանժէի հետ), — այս բոլորը վաղուց վրդովեցնում էր Եւրոպային։

Նա խուռով էր իւր մեծ որդու՝ Վիկտորի և իւր ամուսին Կլոտիլդի հետ, որ Իտալիայի այժմեայ թագաւորի քոյրն է։ Դորանից են այն զարհուրելի տեսարանները, որ տեղի են ունեցել պրինցի մահուան սենեակում։ Նորա կտակը, որպէս այժմ յայտնուեց, կազմուած է այնպէս որ պրինցը իւր միակ ժառանգ ճանաչում է իւր երկրորդ որդուն՝ պրինց Լուի Նապոլէօնին, մինչդեռ իւր անդրանիկ որդուն զրկում է բոլորովին։ Լրագիրները արդէն տեղեկացրին, որ պրինց Լուին, որը այժմ ռուսաց զինուորական ծառայութեան մէջն է, ուղեկցելով իւր բանակատեղի Թիֆլիսը, յայտնել է որ իւր հօր կտակը չի ընդունում և որ նա ճանաչում է իւր մեծ եղբօր, Վիկտորի, աւագնութիւնը։ Նկատենք նաև, որ Նապոլէօն III-ի որդին, մեռաւ 1879-ին, կտակով բոնապարտեան տան գլուխ իրանից յետո ճանաչել էր ոչ թէ պրինց Ժերոմ Նապոլէօնին, այլ սորա մեծ արդի Վիկտորին։

Գէտք է կարծել, որ պրինց Ժերոմ Նապոլէօնի հետ անյայտանում է աշխարհքիս երեսից նորագոյն դարու ամենազարմանալի և տարօրինակ մեծ տոհմի վերջին նշանաւոր Նապոլէօնիդը և որ բոնապարտեան կուսակցութիւնը այսուհետև կը կորցնի Ֆրանսիայում նոյն իսկ այն դժը որ այս քսան տարիներում չը կարողացաւ խախտել Ֆրանսիական հանրապետութեան հեղինակութիւնը։

---

† ԼՈՒԴՎԻԳ ՎԻՆԴՀՈՐՍՏ

Նոր տոմարով 14 մարտի 1891 թ. վախճանուեց Գերմանիայի կաթոլիկների կղերական կուսակցութեան կամ Կենտրոնի [1]) գլուխ Լուդվիգ Վինդհորստը, նորագոյն Գերմանիայի ամենանշանաւոր պարլամենտական անձնաւորութիւնը, եթէ մի կողմ թողնելու լինենք իշխան Բիսմարկին։ Այս դարուն գերմանական ռեյխստագում (կայսերութեան պատգամաւորների ժողովը Բերլինում) ամենից մեծ կուսակցութիւնը՝ կաթոլիկ կղերական կուսակցութիւնն է։ Այդ ոյժին նա հասել է շնորհիւ Վինդհորստի։ Թէ ինչ զարմանալի տաղանդ էր հարկաւոր ունենալ մի այդպիսի յաջողութիւն ձեռք բերելու համար—բաւական է եթէ ասենք, որ Վինդհորստը այդ բանը յաջողացրել է ընդդէմ ժամանակիս հակակղերական ոգուն և ընդդէմ Բիսմարկի նման մարդու կատաղի թշնամութեան, այն Բիսմարկի, որը իւր օրերում կարողացել է շատ ուժեղ կուսակցութիւններ ջարդ ու փշուր անել։ Դեռ ևս մօտ մի տարի առաջ, երբ Բիսմարկը դեռ ևս իւր կանցլերական պաշտօնումն էր, ռեյխստագի նոր ընտրութիւններից յետոյ, որից Կենտրոնը դուրս եկաւ առաջուայ տարիներից աւելի էլ զօրեղացած, Բիսմարկը իրան ստիպուած տեսաւ բանակցութիւնների մէջ մտնել Վինդհորստի հետ, իւր մօտ հրաւիրելով նորան։

Այդ դէպքը այն աստիճան խորթ թուաց, որ, ուրիշ պատճառների շարքում, այդ էլ մէկն եղաւ Բիսմարկին իւր պաշտօնից հրաժարացնելու։ Բայց տարին չ'անցած՝ կայսր Վիլհելմ II ինքը ստիպուած տեսաւ իրան նոյն յարաբերութիւնների մէջ մտնելու այդ զարմանալի մարդու հետ։ Եւ Վինդհորստը թաղուեց պատուած կայսեր ներկայացուցչի ներկայութիւնով։

Ինչ դաղափարի համար էր կուռում Վինդհորստը? Պարզ պատասխանը այդ հարցին կը տայ երևի միայն նորան լաւ ուսումնասիրած կենսագրողը, ասել է թէ ապագան։ Որովհետև նոյն իսկ

---

[1]) Կաթոլիկ կղերական կուսակցութիւնը կոչւում է նաև Կենտրոնի կուսակցութիւն, որովհետև նորա անդամները նստում են դերմանական պարլամենտի կենտրոնական աթոռների վերայ։

նրա ջերմ բարեկամներից ոմանք պնդում են որ նորա քաղաքականութեան կենտրոնակէտը եղած են նորա վերջինները (Հաննովրեան) պլանները, իսկ միւսները, թէ՝ նորա իսկական նպատակները եկեղեցական-քաղաքականն են եղել։ Եւ չը նայած որ նոյն իսկ իւր բարեկամները հաւասար կարծիք չունին նորա ոգու բուն էութեան մասին և հէնց այդ անորոշութեան պատճառով զարմանալի է թւում, որ նա կարողացաւ միլիոնաւոր մարդկանց կատարեալ վստահութիւնը ձեռք բերել։

Այդ հազւագիւտ մարդուն ճանաչելու համար լաւագոյն միջոցը նորա կեանքի պատմութիւնն է։ Վինդհորստը ծնուեց 17 յունւ. 1812 թ. Օսնաբրիւկում, գիւղացի ծնողներից. նոյնտեղ էլ նա կրթուեց եկեղեցական կոչման համար, որին սակայն չը հետևեց նա։ Համալսարանը աւարտելով նա առաջ փաստաբան եղաւ, յետոյ կոնսիստորիական խորհրդատու, յետոյ ապելացիայի դատարանի աւագ խորհրդատու, ապա 1851 թւականին նշանակուեց արդարադատութեան մինիստր նախկին Հաննովրեան թագաւորութեան։ Մի երկրորդ անգամ նշանակուեց արդարադատութեան մինիստր 1862-ին։ 1849-ից սկսած նա անդամ էր Հաննովերի պարլամենտի, ուր նա եռանդով պաշտպանում էր պարտիկուլարիստական և հակա-պրուսական քաղաքականութիւնը, այնպէս որ, մինիստր դառնալով, նա աւելի և ս զարգացրեց հակառակութիւնը Պրուսիայի և պրուսականութեան դէմ, պաշտպանում էր Աւստրիայի ձգտումները, այն է որ Հաննովէրը կպած մնայ աւստրիական քաղաքականութեան։ Այդ ժամանակները արդէն կաթոլիկութիւնը Հաննովէրում սկսեց ուժեղանալ, և Վինդհորստ իւր կողմից աշխատեց որ կաթոլիկութիւնը ուժեղ դիրք բռնէ երկրում։ Այդ բոլորի համար նա մնաց երախտապարտ Հաննովէրի թագաւորական տան, որը նորան այդքան բարերարել էր և որի շահերի համար նա մինչև անգամ օգնութեան ձեռք կառկառեց Բրանդիս—Պլատէնի հակա-սահմանադրական մինիստրութեան։

Հասաւ 1866 թւականը, պրուսական-աւստրիական պատերազմի տարին։ Հաննովերի թագաւորը բռնեց Աւստրիայի կողմը և այդ քայլը, ինչպէս յայտնի է, թէ թագաւորական տան և թէ աւհասարակ այդ երկրի անկախութեանը թանկ նստեց։ Հաննովէրը միացրուեց յաղթող Պրուսիային, իսկ թագաւորը Դէորդ V. աքսորուեց։

Վինդհորստը այն խորհուրդատուների շարքումն էր, որոնք Գէորգ Ֆ-ին մղեցին դէպի այդ քաղաքականութիւնը։

Որ Հաննովէրը միացրեց Պրուսիային, այդ աւելի և սաստկացրեց Վինդհորստի հակակրութիւնը Պրուսիայի դէմ։ Նա վայր դրեց իւր 1865-ին ստացած բարձր պաշտօնը, որ անարգել կերպով իրան նուիրէր պարլամենտական կուռին ընդդէմ նոր քաղաքական դրութեան, և պատգամաւոր ընտրելով՝ նա մտաւ պրուսական պատգամաւորների ժողովը, ապա և գերմանական ռէյխստագը իբր պարագլուխ Վելֆեան (Հաննովրեան) կուսակցութեան և իբր պաշտպան բոլոր պարտիկուլարիստական ձգտումների (ուրեմն ընդդէմ գերմանական այն միութեան որ ստեղծեց Բիսմարկ)։

Որպէս դիպլոմատիայի և տակտիկայի մէջ շատ փորձաւոր մէկը, նա, որը թէև զուտ կաթոլիկական բայց բարեկամ չէր պապի անսխալականութեան դոգմայի, այս վերջին հակառակութիւնը ձեռքից թողեց, որպէս պնդում են նրա համար, որ, իբր առաջնորդ մի ուժեղ կաթոլիկական կուսակցութեան՝ աւելի մեծ յոյսերով կարողանայ իւր վելֆական (Հաննովրեան պարտիկուլարիստական) նպատակներին հետևել, և մի այնպիսի ոյժ միացնել իւր ձեռքում, որ Պրուսիան ստիպուած լինի հաշուի առնել այդ հանգամանքը աւելի, քան եթէ Վինդհորստը միայն լոկ վելֆեան գրուպպայի պարագլուխ։ Իսկապէս այդ յաջողեց նրան, ստեղծելով Կենտրոնի կուսակցութիւնը, որի ոյժը նա ծառայեցնում էր նաև իւր վելֆական նպատակներին, չը նայած որ Կենտրոնի կուսակցութեան մէջ կային տարրեր, որոնք բոլորովին վելֆական հակումներ չունէին։ Վինդհորստի յաջողութիւնը այդ գործում այնքան մեծ էր որ Հաննովրեան պրովինցում (նախկին թագաւորութիւն) նաև այն տարրերը յարեցին նրան, որոնք առաջ վճռական կուիս էին մղում կաթոլիկականութեան դէմ։

Կենտրոնի կամ որ նոյնն է՝ Վինդհորստի կուսակցութեան նշանաւորագոյն կուիը այն էր, որ նա վարեց ընդդէմ Բիսմարկի քաղաքականութեան՝ վերաբերեալ դպրոցի և եկեղեցու։ Այդ կուիը կրում է յատուկ անուն «կուլտուրկամպֆ» (Rulturkampf), որ բառացի նշանակում է՝ քաղաքակրթութեան կուիւ։ Բիսմարկ ուզում էր դպրոցը ազատ պահել կաթոլիկ կղերականութեան, որ նոյնն է թէ պապի ազդեցու-

թիւնից։ Նաև կղերական դասակարգը պէտք է ստանար պետական-քաղաքացիական կրթութիւն կամ ենթարկուէր պետական օրէնքներին։ Այդ կուսի սկզբնաւորութեան և ամբողջ պրոցիսի մասին խօսելը հեռու կը տանէր մեզ, բայց սա հաստատ է, որ այս կուսը այլ վախճան կ'ունենար, եթէ միայն կաթոլիկ կուսակցութեան գլուխ չը լինէր Վինդհորստը, որը իւր անխոնջ գործունէութիւնով և ամեն բոպէ կուսի համար պատրաստ լինելովը, այնքան ճարպիկութեամբ օգտւում էր իւր հակառակորդի բոլոր թոյլ կողմերից։ Այդ կուսից Վինդհորստը դուրս եկաւ այնքան մեծացած, այնպիսի գիրք ստացած, ինչպիսին չի ձեռք բերել Պրուսիայում և Գերմանիայում ոչ մի պարլամենտական մարդ և որին հազիւ թէ շուտով ով և իցէ կարողանայ ձեռք բերել։

Բայց այն ինչ իւր տակտիկայի գլուխ գործոցն էր, այդ այն էր որ, չը նայած որ նա գլուխ էր մի կուսակցութեան, որը նորաստեղծ գերմանական կայսերութեան հիմնելուն և կազմակերպելուն թշնամի էր, այնու ամենայնիւ նա այնպիսի ուղղութիւն տւեց Կենտրոնի կուսակցութեան, որ վերջինս մեծ մասնակցութիւն ունեցաւ օրէնսգրութեան գործում։ Այդ նորանից էր որ Կենտրոնի կուսակցութեան աւելի հեռատես մասը տեսնում էր ընդհանուր պետական օրէնքների անհրաժեշտութիւնը։ Թոյլ տալով որ իւր կուսակցութեան մի մասը «քրիստոնէական-պահպանողական» դրոշակի տակ, իսկ միւսները յառաջդիմականների և դեմոկրատների կողմերում կուռեն, նա այնու ամենայնիւ գիտէր ամենքին ի մի խմբել, երբ հարկաւոր էր իւր մեծ թշնամուց (Բիսմարկից) մի առաջարկութիւն լսել, որ կարելի լինէր նորանից աւելի ևս մեծ զիջումներ դուրս կորզել։ Օրինակ, Բիսմարկը 70-ական թուականների վերջում ձեռնարկեց տնտեսական նոր քաղաքականութեան՝ հովանաւորող սիստեմի մտքով։ Բոլոր կուսակցութիւնների մէջ էլ կային մարդիկ կամ ընդդէմ կամ բարեկամ այդ սիստեմի։ Բայց միայն Վինդհորստն էր որ կարողացաւ այդ ամենից մի մեծամասնութիւն գլուխ բերել յօգուտ Բիսմարկի այդ առաջարկութեան, բայց ի հարկէ միմիայն նորա համար որ Բիսմարկը զիջումներ անէ եկեղեցական և դպրոցական գործերում։ Եւ Վինդհորստը ստացաւ բաւարարութիւն այդ ծառայութեան համար։ Նա ստիպեց Բիսմարկին, ինչպէս փոխաբերական մտքով ասում են, «գնալ Կանոսսա», հպատակւել պապին։

Երբ այդպիսով վերացուեցին «մայիսեան օրէնքները» (այսպէս են կոչուում այն օրէնքները, որ 1873-ին յառաջացրին կուլտուրկամպֆը), այդ ժամանակ բնական է որ Վիլդհորստից սկսեցին հեռանալ այն ամենքը, որոնք կապուած էին նորա հետ միմիայն այդ կուլի համար։ Վելֆեան գրուպպան սկսեց տեսնել, որ Վիլդհորստը թողել է նախկին նեղ վելֆեան միտումները և նա պաշտպանում է միայն կաթոլիկական ինտերեսները։ Նոքա նկատեցին որ Վիլդհորստը իւր ներքինում ուրիշ մարդ է դառել։ Եւ այդ բնական էր. Վինդհորստը, այնքան տարիներ աշխատակցելով կայսերութեան օրէնսդրական գործի մէջ, սկսել էր գտնել որ Բիսմարկի ստեղծած գերմանական միութիւնը կարելի բան է և որ չի կարելի ի սէր Հանովերի զոհել միացած հայրենիքը։ Այդ պատճառով Վինդհորստի մէջ վելֆականը կամաց կամաց մարում էր և այն զուտ կաթոլիկը, որը իւր եկեղեցու համար այնքան բան էր յաջողացրել, զգում էր միշտ աճող ջերմութիւն այն պետութեան համար, որի մէջ իւր հաւատակիցների հետ միասին այնքան նշանաւոր յաջողութիւններ էր ձեռք բերել։ Թէև Վինդհորստը, միշտ նորանոր խնդիրներ հարուցանելով, կարողանում էր հին բարեկամներին կրկին իւր հետ կապել, բայց նա զգում էր որ Կենտրոնի նշանակութիւնը կորչում է և որ իւր սեպհական դիրքը խախտուում է։ Բայց ահա վրայ հասան 20 փետրու. 1890 թուականի ընտրութիւնները, որից Վինդհորստը դուրս եկաւ մի այնպիսի ոյժով, ինչպիսին նա երբէք ունեցած չէր։ Ժողովրդական դպրոցների մի նոր օրէնքով առ միշտ սահման դրուեց եկեղեցու ներգործութեան դպրոցի վերայ որով և իսկապէս վերջապէս վերջացաւ կուլտուրկամպֆը։ Այդ օրէնքը այնքան արմատական չէր որքան 1873-ի մայիսեան օրէնքներն էին, դա մի տեսակ հաշտութիւն է պետութեան և եկեղեցու։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Գոսլերի հրաժարականը Վինդհորստի ամենավերջին յաղթութիւնն էր. և այդ այն Գոսլերն էր, որի մասին մի քանի ամիս առաջ դպրոցական կոնֆերենցիան բացելիս, կայսր Վիլհելմ II ամենքի առաջ յայտնեց թէ՝ Պրուսիան նորա պէս լաւ մինիստր ունեցած չէ!

Z.